ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Լարա Ասրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....3

Ուսուցման ակտիվ մեթոդները, դրանց կիրառման ձևերը դասագործընթացում……...……5

Եզրակացություններ……..17

Օգտագործած գրականության ցանկ……..18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: <<Ուսուցման մեթոդը>> բարդ և բազմակողմանի հասկացություն է: Դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ինչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու, ինչի համար սովորեցնել (կրթության նպատակները) և ինչպես սովորեցնել (ուսուցման մեթոդներ): Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներ իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել <<Աշխարհագրություն>> առարկայի դասավանդման գործընթացում կիրառվող բազմաթիվ մեթոդներ:

Աշխատանքի խնդիրն է՝ ցույց տալ ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար տարբեր մեթոդների իմացության և կիրառման անհրաժեշտությունը:

Հետազոտության տեսական նշանակությունն է ցույց տալ, որ մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող:

Հետազոտության գործնական նշանակությունն է բացահայտել, որ ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

<<Ուսուցման մեթոդը>> բարդ և բազմակողմանի հասկացություն է: Դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ինչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու, ինչի համար սովորեցնել (կրթության նպատակները) և ինչպես սովորեցնել (ուսուցման մեթոդներ): Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներ իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առաջ.

. ինչպես հաջող պլանավորել

. ինչպես հաջող իրականացնել դասը

. ինչպես կանխատեսել արդյունքները

. ինչպես հասնել նպատակներին

. ինչպես վերլուծել հաջողություններն ու բացթողումները

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն: Հայրենի երկրի, երկրամասի, մարզի ու բնակավայրի խորն ու բազմակողմանի աշխարհագրական ուսումնասիրությունը տեղական փաստացի նյութերի միջոցով խորացնում է աշխարհագրական ընդհանուր դասընթացներից ստացված գիտելիքները

բնության, նրա ամբողջական համալիրների, բնական առանձին բաղադրատարրերի և դրանց փոխպայմանավորվածության մասին[2, 7]:

Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ. <<Ուսուցման մեթոդը ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա>>: <<Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացմանը>> [10]:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ բռնել են ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվել և կիրառվելու են: Սակայն հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն: Ակտիվ ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ *ավանդական* և *նոր* կամ *ժամանակակից մեթոդներ*: *Ավանդական* են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է

պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործության մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են. .աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթաց

.աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար

.աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական կարողություններ

. նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը

. ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմագործառութային նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

<u>Ուսուցչի հարցադրումները՝ որպես քննադատական մտածողության զարգացման մեթոդի բաղկացուցիչներ:</u> Քննադատական մտածողությունը խթանելու կամ արգելակելու ամենաազդեցիկ միջոցներից են ուսուցչի հարցերը: Ըստ բազմաթիվ հեղինակների ուսուցչի հարցերը կարող են սահմանափակել աշակերտի մտածողությունը: Դրանք պահանջում են նյութի պարզ մտապահում և վերարտադրում կամ աշակերտին մղեն խորհելու, կշռադատելու, վերակառուցելու, երևակայելու, ստեղծագործելու և ուշադիր ծանրութեթև անելու: Հարցադրումները

պետք է խթանեն աշակերտների մտավոր աշխատանքը, օգնեն հասկանալ, որ իրենց մտքերը կարևոր են և կարող են ունենալ արժեքավոր մտքեր: Առաջարկվող հարցերի շնորհիվ աշակերտները կարող են հասկանալ, որ գիտելիքը քարացած չէ, գաղափարները փոփոխական են: Դպրոցական ամենավաղ տարիքից երեխաներն ուշի-ուշով հետևում են ոչ միայն իրենց ուսուցչի ասածին, այլև նրա արածին: Ուսուցչի օգնությամբ և նրա օրինակին հետևելով՝ աշակերտները ձեռք են բերում սովորելու, գիտելիքները կիրառելու, իմացածը համակարգելու և եզրահանգումներ անելու կարողություններ: Խոսքը, լեզուն և մտածողությունը գտնվում են անմիջական կապի մեջ: Կաշկանդված խոսքի արդյունքն է կաշկանդված սահմանափակ միտքը [5, 86]:

Այսպիսով, ճիշտ կազմակերպված հարցադրումներն անմիջականորեն կապված են ոչ միայն աշակերտների խոսքի, այլև մտքի զարգացման հետ: Փաստերին վերաբերող հարցերի պատասխաններն իմացող և դրանց մտապահող աշակերտները հաճախ չեն յուրացնում դրանց բուն իմաստները և դժվարանում են իրենց մտապահած գիտելիքների օգտագործմամբ տրամաբանական եզրահանգումներ անել:

Նոր տեղեկատվությունը կշռադատելու և նախկին գիտելիքների ու պատկերացումների հետ այն համադրելու համար աշակերտները պետք է ներգրավեն իմաստավորված քննարկումների մեջ: Սովորողները կարողանալու են իրենց մտքերն արտահայտել սեփական բառապաշարով և յուրացնել ցանկացած նոր բառապաշար: Նոր գիտելիքը նոր բառապաշարի միջոցով ըմբռնելու, յուրացնելու, իմաստավորելու և կշռադատելու շնորհիվ է, և նրանք սովորում են սովորել և այն վերածել ողջ կյանքում շարունակվող գործընթացի: Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ունի ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

Բենջամին Բլումը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար կարևորում է նյութի մատուցմանը զուգահեռ սովորողներին քննադատական մտածողությունը խթանող հարցեր առաջադրել: Նման հարցերը հենց դասի ընթացքում դասակարգվում են ըստ տեսակների և ուղվածության:

Նմանատիպ հարցերի շնորհիվ աշակերտները հնարավորություն են ստանում մեկնաբանել տեղեկությունները, համադրել գաղափարները, վերլուծել դիտարկված երևույթները, վերակառուցել կամ այլ կերպ արտահայտել իրենց պատկերացումները և գնահատել պատմվածքի համապատասխան հատվածնը:

Այս հարցերը հիմնված են Բլումի յուրացման համակարգի վրա, որը լրամշակվել է Սանդերսի կողմից 1969թ. [5, 89]: Այն յուրացման փուլերին համապատասխանող ու դրա խնդիրների լուծմանը ծառայող հարցերի համակարգ է: Սանդերսն առաջարկել է հարցադրումներ, որոնք նպաստում են Բլումի տաքսոնոմիայում ներկայացված ուսումնական խնդիրների լուծմանը: Դրանք հարցեր են՝ ուղղված գիտելիքների ստուգմանը և յուրացման մակարդակի որոշմանը: Այդ կերպ խթանվում է գիտելիքների կիրառումը, առիթ է ստեղծվում վերլուծության, համադրման և անդրադարձի համար: Այսօր ձևավորվել են հարցադրումների համակարգման բազմաթիվ տարբերակներ: Ներկայացվող համակարգն այդ շարքի տարբերակներից մեկն է: Ամեն դեպքում կարևորն այն է, որ առաջարկվող հարցերը տարբեր մակարդակներում տարատեսակ մտածողության խթանման միջոցներ են: Իսկ դասավանդման նպատակն աշակերտներին մտածողության ամենապարզ տեսակից՝ ստորին աստիճանից դեպի ամենաբարձր աստիճանը տանելն է:

<u>Փաստերին</u> վերաբերող հարցերը նպատակ ունեն բացահայտել սովորողների կողմից փաստերի իմացությունը: Դրանք սովորաբար պահանջում են միայն պարզ վեհիշում, և ճիշտ պատասխանի համար աշակերտից պահանջվում է բովանդակության կամ փաստական գիտելիքի վերարատադրում: Դա, ըստ էության, կարճաժամկետ մտապահված գիտելիք է: Նման հարցերի պատասխանները կարելի է գտնել դասագրքում, տեղեկատվական գրականության մեջ և ինտերնետում: Սա ուսուցման կարևոր նպատակներից մեկն է, որը քննադատական մտածողության ձևավորման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է:

Ուսուցման այս փուլի ապահովման համար անհրաժեշտ է կրկնել արդեն ասվածը և մտապահել:

Չնափոխված հարցադրումները սովորողներից պահանջում են ստացված գիտելիքներն արտահայտել որևէ այլ ձևով:

Նկարագրական կամ թարգմանական հարցերը կարող են աշակերտին առաջարկել մտովի վերականգնել ուսումնասիրվող նյութը և նկարագրել այդ մտապատկերը: Աշակերտները նկարագրական հարցերին պատասխանելիս պետք է քննարկեն նաև ընթերցանության հետ զուգահեռ առաջացած զգացմունքներն ու տպավորությունները, այսինքն ապրած հույզերը, <<լսած>> ձայները, <<զգացած>> հոտերը և այլն: Մեկնաբանական հարցերի շնորհիվ աշակերտները մտովի կապեր են ստեղծում գաղափարների, փաստերի, սահմանումների կամ արժեքների միջև: Այս հարցերը ստիպում են սովորողին մտածել, թե ինչպես են գաղափարները կամ հասկացություններն իմաստավորված կերպով կապվում իրար հետ: Այս կարգի հարցերը խթանում են խոհական մտածողությունը, նպաստում առաջարկվող նյութի ոչ միայն մտապահմանը, այլև իմաստավորմանն ու յուրացմանը:

Կիրառման աստիճանին միտված հարցերն աշակերտին հնարավորություն են տալիս քննարկման փորձ անել և ուսումնական խնդիրների տրամաբանական կամ առողջ բանականության վրա հիմնված լուծումներ գտնել:

Վերլուծական հարցերն ստիպում են մտածել, թե որքան է բազմակողմանի ներկայացված ուսումնական նյութը, հնարավոր է արդյոք մեկ այլ տրամաբանական բացատրություն կամ մեկնաբանում տալ: Համադրության փուլին ծառայող հարցերը խթանում են յուրատեսակ մտածողություն, որն անհրաժեշտ է առաջադրված խնդիրների ստեղծագործական լուծումներ գտնելու համար: Եթե կիրառության հարցերը աշակերտներին առաջարկում են խնդիրները լուծել դասի շրջանակներում՝ ունեցած տեղեկությունների ու տվյալների օգտագործմամբ,

ապա համադրության հարցերը թույլ են տալիս տվյալ խնդիրը լուծել ստեղծագործաբար առկա գիտելիքների և փորձի ողջ բազմազանության ներդրմամբ: Համադրության հարցերի միջոցով աշակերտներին կարելի է քաջալերել:

Գնահատման հարցերն աշակերտներին հրավիրում են լավի ու վատի կամ ճշտի ու սխալի մասին դատողություններ և եզրահանգումներ անել: Գնահատմանն ուղղված հարցերը աշակերտին օգնում են ըմբռնել խնդիրը, տեղադրել այն սեփական սկզբունքների համակարգում և ըստ այդմ դատողություններ անել առաջադրված խնդրի մասին: Այդ աշխատանքը ներառում է բավականին բարդ համադրություններ և ըմբռնում, ինչի շնորհիվ յուրացման գործընթացը անձնավորվում է, դառնում յուրաքանչյուր սովորողի սեփական գործը և նրան օգնում սեփականացնել նոր գաղափարներն ու հասկացությունները: Գնահատմանն ուղղված հարցերի միջոցով աշակերտին մղում ենք ստացած տեղեկատվության որակական և նույնիսկ նոր տեղեկատվության լույսի ներքո սեփական վարքագծի գնահատմանը [5, 91]: Ձևակերպված հարցադրումների թելադրանքով աշակերտները կսկսեն կառուցել լուրջ, իմաստավորված գաղափարներ, անել եզրահանգումներ և նույնիսկ ստեղծել նորույթներ: Այդ կառույցները ստեղծվում են այն բանի շնորհիվ, որ սովորողներն սկսում են օգտագործել միանգամայն փորձն իրենց ողջ ճանաչողական գործընթացում: Սովորեցնողի հարցերի շնորհիվ ծնվող երկխոսությունը հնարավորություն է տալիս՝ աշակերտներից յուրաքանչյուրին հասցնել ընկերների արտահայտած մտքերի մեծ բազմազանությունը: Սա իր հերթին ընդլայնում է ամբողջ դասարանի բառապաշարը, հասկացությունների շրջանակը, նոր մտքերն ստեղծագործաբար ընկալելու և արտահայտելու կարողությունը: Այս ամենի շնորհիվ ուսուցիչը հնարավորություն է ունենում բոլորին ցույց տալ, որ ինքը գնահատում է երեխաների մտավոր աշխատանքը: Աշակերտները հասկանում են, որ գիտելիքն արժեքավոր դարձնելու համար պետք է կարողանալ այն ճիշտ ձևով համադրել, վերլուծել և կիրառել, որ գիտելիքը միայն այն չէ, ինչ գրված է դասագրքում կամ ներկայացնում է ուսուցիչը:

Նրանք կռահում են, որ իրենց գլխում ծագած մտքերը նույնպես արժեքավոր են և գնահատվում են բոլորի կողմից և գիտելիքը ծնվում է, երբ իրենց նոր գաղափարները և հասկացությունները համադրելով իմացածի հետ կառուցում են նոր իմաստներ:

Դասի պլանավորման ժամանակ կարևոր է նաև որոշել, թե պատմվածքի որ մասում է անհրաժեշտ կանգ առնել և հարցեր տալ: Այդ կանգառները պետք է համապատասխանեն ուսուցանվող նյութի տրամաբանությանը: Երեխային դատողություններ, կանխատեսումներ անելու հնարավորություն տալու համար պետք է մեծ զգուշությամբ ընտրել կանգառի տեղերը՝ հաշվի առնելով ոչ միայն ուսուցանվող նյութի բովանդակային պահանջները, այլև սովորողների տարիքային կոնկրետ դասարանի առանձնահատկություններն ու հետաքրքրությունները: Աշակերտներին հարցեր ուղղելու ընթացքում շատ կարևոր է ժամանակի տրամադրումը, որպեսզի նրանք կարողանան մտածված և տրամաբանված պատասխաններ տալ: Ուսուցիչները սովորաբար սպասում են մի քանի վայրկյան կամ ավելի քիչ: Սակայն հետազոտությունները ցույց են տվել, որ այդ ժամանակի երկարացումը մինչև երեք վայրկյան, ոչ միայն կբարձրացնի մտածողության որակը, այլև կմեծացնի պատասխանող աշակերտների թիվը: Ահա թե ինչու կարևոր է, որ ուսուցիչները վերանայեն իրենց հարցերի կառուցվածքը և բավականաչափ ժամանակ նախատեսեն պատասխանների համար: Երբ ուսուցիչները դասարանում հարցերի հիման վրա բանավեճեր են կազմակերպում, նրանց առաջնահերթ խնդիրներից մեկն է դառնում բոլոր աշակերտների մասնակցության խրախուսումը: Դրա համար երբեմն անհրաժեշտ է լինում անունով դիմել համեմատաբար անհամարձակ աշակերտներին և անգամ շրջանցել նրանց, ովքեր իրենց պարտքն են համարում պատասխանել անխտիր բոլոր հարցերին: Շատ աշակերտներ խուսափում են մեկնաբանություններից, հարցերին պատասխանելուց, որովհետև մեծ մասամբ դա ընկալում են որպես գնահատում, այլ ոչ քննարկման մի մաս: Երբ ուսուցիչները

հետզհետե հրաժարվեն գնահատական նշանակելու նպատակով տրվող հարցերից և ավելի հաճախ առաջարկեն քննադատական մտածողությունը խթանող հարցադրումներ, աշակերտները կսկսեն ավելի անկաշկանդ ներգրավվել բաց քննարկումների մեջ: Երբ աշակերտները վարժվում են միակ ճշմարիտ պատասխան չենթադրող իսկական քննարկումներին, որտեղ բոլոր մտքերն ընդունվում են հարգանքով և կարևորվում, նրանք հաճույքով են արտահայտում սեփական մտքերը և լսում ուրիշների կարծիքները: Երբ աշակերտները հասնում են փոխգործունեության այս մակարդակին, ուսուցիչների համար ավելի դյուրին է դառնում ուղղորդված քննարկումներ վարելը: Այս դեպքում աշակերտների գործուն մասնակցությունն արդեն դառնում է բնական: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթաման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնակույտ և այլն:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, վենի դիագրամ, տեքստի նշագրման համակարգի մեթոդ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք և այլն:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում՝ քառաբաժան, խորանարդում և այլն:

<u>Մտագրոհ կամ մտքերի տարափ:</u> Մինչ դասանյութին անցնելը՝ ուսուցիչը որոշակի ժամանակում կազմել է տալիս երեխաների իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Ապա բոլոր մտքերը գրի է առնվում գրատախտակին: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում: Այսպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը գրատախտակին

գրի առնելուց հետո, ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ դասարանով քննարկում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնությունները քննարկում, ուղղում: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ հայտնաբերելը:

<u>Բանալի եզրույթների մեթոդ:</u> Ուսուցիչը կարող է տեքստից ընտրել 4-5 բանալի բառեր և դրանք գրել գրատախտակին: Զույգերին տրվում է 5 րոպե, որպեսզի ուղեղային գրոհի միջոցով տան այդ բառ-եզրույթների ընդհանուր մեկնաբանությունը և ենթադրեն, թե դրանք ինչպես կկիրառվեն պատմաժամանակագրական կամ բնագիտական տեքստում: Երբ սովորողները գալիս են մեկ ընդհանուր եզրակացության և գտնում իրենց <<բանալի>> բառերը, ուսուցիրը խնդրում է այդ բառերին ուշադրություն դարձնել նոր նյութի ուսուցման ժամանակ, որպեսզի ստուգեն՝ ճիշտ իմաստով են կիրառվել, թե ոչ:

<u>Խմբավորման մեթոդ:</u> Խմբավորման մեթոդը խրախուսում է երեխաներին՝ ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Մի դեպքում այն կարող է օգտագործվել մինչ թեմայի ավելի խոր ուսումնասիրությունը (խթանման փուլ), մյուս դեպքում՝ սովորածն ի մի բերելու համար (կշռադատման փուլ): Սա գրավոր աշխատանք է, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Աշակերտները այն կատարելով՝ հնարավորություն են ունենում տեղեկանալու իրենց իմացած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերին: Մեթոդի կիրառման ժամանակ հանձնարարվում է՝

.գրել առանցքային բառը թղթի կամ գրատախտակի կենտրոնում,

.գրել ընտրված թեմային առնչվող բառերն ու արտահայտությունները՝ առանց անհանգստանալու ուղղագրության կանոնների պահպանման համար,

.գրի առնել միտքը եկած բոլոր գաղափարները՝ առանց մտածելու դրանց ճշտության մասին,

.մտքերը գրանցելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք կապ ունեն իրար հետ:

Խմբավորման մեթոդը կիրառելիս թեման պետք է ծանոթ լինի, որպեսզի խումբը բավարար տեղեկություն ունենա՝ խմբավորումն ամբողջական ներկայացնելու համար:

<u>Պրիզմա:</u> Այս մեթոդը խրախուսում է սովորողներին ակտիվ ու համարձակ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է, այսինքն՝ կապ է հաստատվում սովորողների ունեցած գիտելիքների և ուսուցանվող նոր նյութի միջև: Այն գծագրական դասակարգչի ձև ունի և մտածողության ընթացքը դարձնում է ավելի ակնառու ու պատկերավոր: Այն կարելի է կազմել անհատապես, բայց առավել արդյունավետ են խմբային աշխատանքի արդյունքները:

<u>Ձնակույտի մեթոդ:</u> Այս մեթոդի նպատակը մասնակիցների կարծիքների փոխանակումն է, ընտրությունը և խմբի գաղափարների կազմումը: Աշխատանքը կարելի է կազմել 2-4 հոգանոց խմբերով: Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է որևէ պատմություն կամ առաջադրանք: Աշակերտները պետք է գրեն իրենց մտքում ծագած մտքերն ու գաղափարները տվյալ պատմության վերաբերյալ: Ապա պետք է կազմեն զույգեր և իրար ներկայացնեն անձնական կարծիքները: Դրանից հետո պետք է երկուսի համար ձևակերպեն ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված կլինեն անհատական կարծիքների ցանկից: Խմբի անդամները միավորվելով՝ 4 հոգանոցներից ձևակերպում են 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Այնուհետև 4 հոգանոց խմբերը միանում են և կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանություններն ու տարբերությունները, նորից կազմելով 4 ընդհանուր

կարծիք ամբողջ խմբի համար: Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները պետք է ներկայացնել դասարանին և կատարել անդրադարձ՝ տալով հետևյալ բնույթի հարցեր.

.ինչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս
.որն էր երկուսով աշխատելու առավելությունը
.որ փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում
.որ փուլում էին ավելի հեշտ որոշումներ կայացնում
.արդյոք բոլորը մասնակցեցին քննարկմանը 8 հոգանոց խմբով աշխատելիս:

Այս մեթոդը նպաստում է, որ յուրաքանչյուր մասնակից ներգրավվի խմբի աշխատանքներում և հաշվետու լինի ստեղծելու, համեմատելու, լսելու, խոսելու:

Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր: Այս մեթոդն արագ կատարվող համատեղ աշխատանք է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն, այսինքն՝ երկակի պատասխան են ենթադրում և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները: Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Վեննի դիագրամի մեթոդ: Վեննի դիագրամը կառուցվում է երկու և ավելի շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները կամ կերպարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդանրությունը ցույց տալու նպատակով: Մի շրջանագծում պետք է բնութագրել մի հերոսին, մյուս շրջանագծում՝ երկրորդին: Հետո համեմատել դիագրամները, այնուհետև հատվող մասում լրացնել ընդհանուր հատկանիշները:

Տեքստի նշագրման համակարգի մեթոդ: Տեքստն ընթերցելու ժամանակ սովորողներին առաջարկվում է տեքստի նշագրման համակարգ, որով ստորաբաժանվում է զետեղված տեղեկատվությունը: Մասնավորապես օգտագործվում են հետևյալ նշանները. (v)՝ինչը նրանց արդեն հայտնի է, (-)՝ինչը հակասում է իրենց պատկերացումներին, (+)՝ ինչը նրանց համար հետաքրքիր է ու անսպասելի, (?)՝ նրանց մեջ ցանկություն է առաջացել ինչ-որ բանի մասին ավելի մանրամասն իմանալ: Սովորողները տեքստը կարդալով՝ համապատասխան նշաններով առանձին պարբերություններ և նախադասություններ նշում են լուսանցքում: Եթե ընթերցելուց հետո սովորողները նշագրել են այն, ապա այժմ կազմում են աղյուսակ՝համապատասխան սյունակների մեջ տեղադրելով 3-4 կետից բաղկացած նյութ:

Տարրական դասարաններում կարելի է հանձնարարել պատմվածքը կարդալ այդ ընթացքում առաջարկելով կատարել նշումներ: Սակայն հաշվի առնելով այդ տարիքի երեխաների առանձնահատկությունները՝ նշագրման համակարգը կարելի է փոփոխել և նրանց համար դարձնել ավելի պարզ: Սա անվանվում է նաև արդյունավետ կարդալու և մտածելու փոխգործուն նշանների մեթոդ:

Երկու աստղի և մեկ ցանկության մեթոդ: Տեքստն ընթերցելուց հետո կշռադատման փուլում կարելի է իրականացնել այս մեթոդը, որի շնորհիվ ստեղծագործությունը դառնում է պարզ, ուսանելի և տպավորիչ:

Սովորողները նախ պետք է գրի առնեն տվյալ ստեղծագործության ամենահետաքրքիր և գլխավոր միտքն արտահայտող երկու նախադասություններ, որոնք էլ հենց դառնալու են <<2 աստղերը>>: Այնուհետև նրանք պետք է շարադրեն, թե ինչպես կուզենային, որ ավարտվեր տվյալ ստեղծագործությունը: Սա էլ կլինի իրենց ցանկությունը:

Երեք բանալու և մեկ կողպեքի մեթոդ: Սա ևս կիրառելի է կշռադատման փուլի ժամանակ: Այն բաղկացած է 2 կետից. տեքստից ընտրել 3 պարբերություն, որոնք ներկայացնում են ստեղծագործության բովանդակությունը (սրանք կլինեն 3 բանալիները, այնուհետև կազմել մեկ նախադասություն սեփական բառերով,

որն արտահայտի տվյալ տեքստի կամ ստեղծագործության բովանդակությունը: Սա էլ կհամարվի կողպեքը:

Աքրոստիքոսի մեթոդ: Այս մեթոդն ակտիվացնում է սովորողներին: Այն հնարավորություն է ընձեռնում՝ դրսևորելու անկաշկանդվածությունը, բացահայտել ունակությունները: Առաջացնում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, զարգացնում ստեղծագործական միտքը: Տվյալ մեթոդի էությունը հետևյալն է. գրել ցանկացած բառ, բառակապակցություն և հորինել բանաստեղծություն՝ յուրաքանչյուր տող սկսել այդ բառի հերթական տառերով:

Հեղինակի աթոռի մեթոդ: Հնարավորություն է տալիս սեփական անձի նկատմամբ ուշադրություն գրավել: Այս մեթոդի շնորհիվ աշակերտների մեջ բացահայտվում է պատասխանատվության զգացումը: Աշակերտներն իրենց գրած շարադրությունները, հորինվածքները և բանաստեղծությունները ներկայացնում կամ պատմում են առանձին աթոռի նստած՝բոլորի աչքի առջև: Նրանք նստում են <<հեղինակի աթոռին>> և պաշտոնական հնչեղություն տալիս խոսքին: Կենտրոնում՝ ամբիոնից խոսելիս նրանց մեջ ձևավորվում է սեփական խոսքին հետևելու կարողություն, ինչպես նաև բարձրանում է սեփական ինքնարժեքը:

10 րոպեանոց շարադրության մեթոդ: 10 րոպեանոց շարադրությունն օգտագործվում է դասի վերջում, որպեսզի աշակերտներին օգնի ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իրենց մտքերը և ուսուցիչներին առավել հստակ պատկերացում տա դասի մտավոր ներգործության վերաբերյալ: Աշակերտներից պահանջվում է գրել, թե ինչ սովորեցին այս դասանյութը ուսումնասիրելիս և գրեն նաև դասանյութի վերաբերյալ մի հարց, որի պատասխանը դեռ չգիտեն:

Ուսուցիչը շարադրությունները կարող է հավաքել, ուսումնասիրել և օգտագործել հաջորդ օրվա դասը պլանավորելիս: Կողային մատյանների մեթոդ: Սա ուսուցանող գրավոր տարբեր մեթոդների հավաքական անունն է: Դրանց համաձայն՝ սովորողներն ինչ-որ թեմա ուսումնասիրելիս գրանցում են իրենց մտքերը: Այս մեթոդի կիրառմամբ նրանք տեքստն ընթերցելուց կամ

նյութի վրա այլ աշխատանքից հետո գրում են հետևյալ հարցերի պատասխանները. ինչ գիտեմ արդեն թեմայի մասին և ինչ է անհրաժեշտ դրա մասին իմանալ: Տեքստում հանդիպելով կարևոր պահերի՝ սովորողները դրանք գրառում են իրենց մատյանների մեջ: Երբ ընթերցման կամ այլ հետազոտական աշխատանքի ժամանակ տեղի է ունենում դադար, նրանք կարող են պատասխանել հետևյալ հարցերին. Ինչ գիտեմ դրա մասին այժմ, ինչպիսի առավել կարևոր պահեր պարզեցի, ինչ եմ ուզում դրա մասին լրացուցիչ իմանալ:

<u>Ուսուցանվող գրավորի լրացուցիչ մեթոդ:</u> Գրավորը վաղուց հայտնի է որպես ուսուցանող գործունեություն: Ուսման գործընթացն անցնում է ավելի լավ, եթե նոր թեմայի վրա աշխատանքն սկսելուց առաջ սովորողներն ի մի են բերում այն, ինչն արդեն գիտեն, ինչը կուզեին իմանալ տրված թեմայից: <<Կողային մատյաններն>> այդ հարցում կօգնեն սովորողներին: Հայտնի է, որ ուսումը <<ծաղկում է>> կշռադատման հիման վրա, քանի որ այն հնարավորություն է տալիս գրի առնել հազիվ ծնված մտքերը: Իսկ հետո նորից ու նորից անդրադարձը դրանց նպաստում է զարգացնել ու գտնել նորերը: Ամենանպաստավոր ուսումն իրականացվում է, երբ սովորողը ուսուցանվող թեման կապում է իր աշխարհընկալման և անձնական փորձի հետ: Օրագրային գրառումները սովորողներին դրդում են անձնական կապերի հաստատել ուսուցանվող նյութի հետ: Ուսուցիչն աշակերտների հետ միասին աշխատում է, ջանում ակնառու կերպով ցուցադրել բոլոր գործընթացները, որպեսզի նրանք հետո կարողանան դրանցից ինքնուրույն օգտվել:

<u>Բանավեճ:</u> Բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների կարգավորված փոխանակություն է: Այն սահմանափակվում է մեկ առանձին թեմայով կամ հիմնահարցով և կառուցվում որոշակիորեն սահմանված կարգով: Այն նպատակ ունի՝ խթանել մեր իմացական հետաքրքրվածությունը, նպաստել նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական կարծիքը պաշտպանելու կարողությանը, ամրապնդել ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալումը: Բանավեճը սկսում են հիմնահարցի ներկայացմամբ, դիաֆիլմի ցուցադրմամբ, նոր

տեղեկությունների հաղորդմամբ, ձայնագրությունների ունկնդրմամբ և խթանող հարցադրումների միջոցով:

- Զրույց: Կիրառվում է սովորողի մտավոր գործունեությունն ակտիվացնելու նպատակով: Զրույցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռք բերում նոր գիտելիքներ: Ի հայտ են գալիս սովորողի անհատական առանձնահատկությունները, մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններ են: Զրույցը չի ընթանում խստորեն մշակված պլանով, կիրառվում է ուսումնական պրոցեսում այլ մեթոդների հետ զուգակցված: Զրույցը բարոյական դաստիրակության մեթոդներից է, որն աշակերտների մեջ կձևավորի՝
- Ռեֆլեկտիվ հմտություններ
- Որոնողական, հետազոտական հմտություններ
- Համագործակցային հմտություններ
- Կառավարման կարողություններ, հմտություններ
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
- Ներկայացման հմտություններ [3, էջ 6]:

T-աձև աղյուսակ: T-աձև աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի 2 կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և կազմակերպչական ձևով և կառուցվածքով: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է 2 բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումասիրելիս:

Քառաբաժան: Դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով ուսուցիչն առաջարկում է կազմել քառաբաժան՝ տետրի էջը խաչաձև բաժանելով 4 հավասար մասերի: Յուրաքանչյուր մասում ուսուցիչն առաջարկում է գրել որոշակի հարց և պատասխանել:

Բնութագրող Զգացմունքներն արտահայտող

Բնութագրիր հերոսին Ինչ զգացմունքներ ունեցաք:

Կենսափորձ

Իմաստավորում

Նյութի բովանդակությունը Նյութին նոր վերնագիր տվեք:

ինչ հիշեցրեց:

Աշակերտները բաժանվում են 4-5 հոգանոց խմբերի: Խմբերը պատասխանում են հարցերին, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրենց խմբի պատասխանները:

Ինտերակտիվ դաս

Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում:

«Ինտերակտիվ» բառը թարգմանաբար նշանակում է «համագործուն դաս կամ միջգործունեություն»: Ինտերակտիվ դասի օրինակ կարող է լինել դասարանական ակտիվ քննարկումը, բանավեճը, խաղը: Նմանօրինակ դասերը սովորողների մոտ ստեղծում են մոտիվացիա՝ ցանկություն առաջացնելով ընթերցելու, լսելու, հասկանալու և ամենակարևորը՝ խոսելու համար բազմաթիվ լեզվական համագործուն ուսումնական խաղերը նպաստում են սովորողի բառապաշարի ընդլայնմանը, զարգացմանը, նորացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը:

Ինտերակտիվ դասն այնպիսի դաս է, ուր ապահովում է ուսուցիչ-սովորող սերտ համագործակցություն: Դասավանդողը հիմնականում հանդես է գալիս, որպես կրթական գործընթացի կազմակերպող, իսկ սովորողը պետք է լինի այդ գործընթացի կենտրոնում, շահագրգռված լինի գործընթացով և ակտիվ մասնակցություն ունենա: Դասը պետք է այնպես կառուցված լինի, որ հնարավոր լինի ներգավել դասարանի բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրին ըստ հնարավորությունների:

Ինտերակտիվ դասը կարլի է իրականացնել նաև առանց որևէ տեխնիկական միջոց կիրառելու: Այս դեպքում, սակայն դավանադողից և սովորողից ավելի շատ ժամանակ ու ջանք է պահանջվում: ՏՀՏ-ները խնայում են այդ ժամանակը՝ թույլ տալով նախօրոք պատրաստվելու և պատրաստել;ու դասը, թեման, նյութը: Մեկ անգամ ստեղծված դասը որոշակի խմբագրումներով հնարավոր է կիրառել այլ անգամներ ևս:

Ինտերակտիվ դասեր անցկացնելու համար լավագույն գործիքներից է ինտրեկատիվ «էլեկտրոնային» գրատախտակը: Այս գրատախտակնները գործածելու երկու հիմնական մեթոդ կա, օգտագործել պատրաստի դասեր և ստեղծել դասարանին և դասավանդնող թեմային համապատասխան անհատական հեղինակային նյութեր, որոնք ուղղված են դասավանդման որակի բարձրացմանը:

Ինտերակտիվ դասեր կարելի է պատրաստել համակարգչային տարբեր ծրագրերով: Օրինակ՝ Word, PowerPoint, HotPotatoes: Համացանցի առկայության դեպքում կարելի է ինտերակտիվ դասեր իրականացնել օգտագործելով տարբեր կրթական կայքեր և համացանցային ռտեսուրսներ: Ինտերակտիվ դասերի համար ի վերջո կարելի է որպես հարմար կրթական տարածքի, օգտագործել բլոգները, Wiki տարածքները, անգամ սոցիալական կայքերը: Դասի ժամանակ դպրոցական կայքում

տեղադրված ուսումնական նյութը մեկնաբանելը նույնպես կարող է դառնալ ինտերակտիվ դասի մի նմուշ:

Ինտերակտիվ դասի օրինակ կարող են ծառայել Smart Notebook ծրագրով պատրաստված դասերը դասավանադողը ինքը կարող է ստեղծել առաջադրանքներ, հանձնարարություններ, հարցաշարեր, թեստեր, խաղեր: ՏՀՏ-ների և լեզվի իմացությամբ հմուտ սովորողները նույնպես կարող են պատրաստել ինտերակտիվ դաս՝ դասավանդողին դարձնելով գործընթացին մասնակից:

Ինտերակտիվ մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանների և իրավիճակների վերլուծության հիման վրա տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտռիվ գործունեության: Իրավիճակների վեր;ուծության հիման վրա տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասը անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես ինտերակտիվ դասեր:

Ինտերակտիվ են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ-օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ.Սարգսյան «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա», Երևան, 2002, 321 էջ:
2. Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2008, 51 էջ:
3. Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2021, 128 էջ:
4. Բնագիտություն 5-6, ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013, 95 էջ:
5. Ն. Ա. Մաքսիմով ,,Ֆիզիկական աշխարհագրության մեթոդական ձեռնարկ,, Երևան 1979, 195 էջ: